

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2018-2019 ուստարի)**  
**10-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)**

**ա) Հայոց պատմություն (15 միավոր)**

1. Ե՞րբ է սկսվել միջին քարի դարը Հայկական լեռնաշխարհում. 0,5 մ.  
 ա/ Բ. ա. 12-րդ հազ. բ/ Բ. ա. 10-րդ հազ.  
 գ/ Բ. ա. 8-րդ հազ. դ/ Բ. ա. 5-րդ հազ.
2. Ո՞վ էր Արտաշես Ա-ի կողմից աջակցություն ստացած Մարաստանի սատրապը. 0,5 մ.  
 ա/ Տիմարքոս բ/ Տիրիբազ  
 գ/ Պիսիստրատ դ/ Արտանես
3. Որտե՞ղ է գտնվել Նանե դիցուհու պաշտամունքի կենտրոնը. 0,5 մ.  
 ա/ Թիլ բ/ Բագաոիճ  
 գ/ Երիզա դ/ Երազամույն
4. Ո՞վ էր առաջնորդում հռոմեական բանակը Խառանի ճակատամարտում. 0,5 մ.  
 ա/ Մարկոս Անտոնիոս բ/ Մարկոս Կրասոս  
 գ/ Լուկիոս Լուկուլլոս դ/ Գնեսու Պոմպեոս
5. Մինչև ե՞րբ է Գիսակ Դիմաքսյանի ղեկավարած ապստամբության շնորհիվ Մեծ Հայքը լիովին վերականգնել իր անկախությունը. 0,5 մ.  
 ա/ 35 թ. բ/ 37 թ.  
 գ/ 43 թ. դ/ 51 թ.
6. Որքա՞ն էր Մարկոս Անտոնիոսին Արտավազդ Բ-ի տրամադրած զորքի թիվը. 0,5 մ.  
 ա/ 13 000 բ/ 16 000  
 գ/ 24 000 դ/ 40 000
7. Քանի՞ նշաններից էր կազմված հայ մեհենագրական համակարգը քրիստոնեության պետական կրոն հռչակման նախօրեին. 0,5 մ.  
 ա/ 22 բ/ 300  
 գ/ 360 դ/ 600
8. Ե՞րբ է Սոհեմոսը վերստին ստանձնել թագավորական իշխանությունը Մեծ Հայքում. 0,5 մ.  
 ա/ 161 թ. բ/ 164 թ.  
 գ/ 163 թ. դ/ 165 թ.
9. Ե՞րբ (թիվը և օրը) տեղի ունեցած իրադարձության մասին են հետևյալ խոսքերը. «Հայերը, նե-տահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավո-րեցին...»: 0,5 մ.

---

10. Ո՞վ է հայոց արքունիքում աշխատություն գրել Տիգրան Բ Մեծի կյանքի և գործունեության մասին: 0,5 մ.

---

11. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)  
 ա/ Արտավազդ Գ-ի գահակալումը Մեծ Հայքում:  
 բ/ Վաղարշ Ա-ի գահակալումը Պարթևստանում:  
 գ/ Վոնոն Արշակունու գահակալումը Մեծ Հայքում:  
 դ/ Արքայական առաջին դրամի հատումը Հայաստանում:  
 ե/ Չենոն-Արտաշեսի մահը:  
 զ/ Արտավազդ Դ-ի սպանությունը:  
 է/ Տիգրան Ե-ի գահակալումը Մեծ Հայքում:

- ը/ Ակցիումի ծովամարտը:
- թ/ Մծուրք քաղաքի կառուցումը:
- ժ/ Արիորբարզանեսի գահակալումը Մեծ Հայքում:

1	2	3	4	5	6	7	8	9	10

12. Համապատասխանեցրե՛ք հասկացություններն իրենց բացատրությունների հետ.

- 1. Արտաշատի թագավորական տնտեսը Արշակունյաց Հայաստանում
- 2. Եկեղեցուն վճարվող հարկատեսակ Արշակունյաց Հայաստանում
- 3. Արատտայի գլխավոր տնտեսական պաշտոնյան
- 4. սահմանապահ զորավարությունների կուսակալը Արշակունյաց Հայաստանում
- 5. Ռուսախինիլի քաղաքի արքունի պալատի անձնակազմի ղեկավարը
- 6. ծառայությունների դիմաց թագավորի կողմից շնորհված հողատիրության ձև միջնադարյան Հայաստանում

ա. «հաշվի մարդ» բ. տասանորդ գ. բդեշխ դ. պարզակականք ե. շահապ զ. «կառավարիչ»  
1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5	6

13. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Երվանդ Սակավակյացի օրոք հայոց թագավորությունն ուներ 40-հազարանոց բանակ:
- բ/ Ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի՝ Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Բ Մեծի հետ:
- գ/ Տիգրան Երվանդյանի իշխանությունը տարածվում էր նաև Կապադովկիայի, Վրաստանի և Ադվանքի վրա:
- դ/ Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից Մենոնը Գավգամելայի ճակատամարտից 2-3 տարի անց ներխուժում է Հայաստան՝ Բարձր Հայքի ոսկու հանքերը գրավելու համար:
- ե/ «Արքայական ճանապարհի» 15 կայաններից կազմված՝ մոտ 330 կմ երկարությամբ մի մեծ հատված անցնում էր Հայաստանի հարավ-արևմուտքով:
- զ/ Ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի՝ Հայաստանի և Միջերկրական ծովի արևելյան ափին գտնվող երկրների միջև աշխույժ առևտուր էր կատարվում:
- է/ Երվանդական Հայաստանից արտահանվում էին մետաքս, բամբակ, թանկարժեք քարեր, ապակյա անոթներ և այլն:
- ը/ Երվանդ Դ-ն Ախուրյանի և Երասխի խառնարանի մոտ կառուցել է Բագարան սրբավայր-քաղաքը:
- թ/ Երվանդական Հայաստանի քաղաքային համայնքներն ունեին իրենց համքարությունները:

1	2	3

14. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը:

- ա/ Երբ Հռոմի կայսերական գահի թեկնածուներից Նիգերը Եգիպտոսից Վաղարշ Բ-ին օգնության խնդրանք է ուղարկում, հայոց արքան պատասխանում է, որ ինքը ոչ մեկին չի օգնելու:
- բ/ Երբ ներքաղաքական պայքարում հաղթած Սեպտիմիոս Սևերոսը ժամանում է Ասորիք, նա շտապում է հաշվեհարդար տեսնել Նիգերի կողմնակիցների հետ:
- գ/ Սեպտիմիոս Սևերոսը պարտավորվում է գումար վճարել հայոց այրուծիի պահպանման համար, որպեսզի վերջինս ապահովի Կովկասյան լեռնանցքների վերահսկողությունը և պաշտպանի մերձակա տարածքները կովկասյան լեռնականների հարձակումներից:



7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Թեբեի փարավոն Յահմոս Ա-ն (Ք. ա. մոտ 1540-1517 թթ.) գրավեց Ավարիսը և վտարեց հիքսոսներին Եգիպտոսից:

բ/ Ամենհոտեպ Դ-ն (Ք. ա. 1279-1213 թթ.) իրեն հռչակեց Աթոնի միակ որդի և ընդունեց Էխնաթոն (Աթոնին հաճելի) անունը:

գ/ Նաբուգոդոնոսոր Բ-ն Ք. ա. 597 և 587 թթ. գրավել է Երուսաղեմը:

դ/ Դարեհ Ա-ն անհաջողություն է կրել հյուսիսսևծովյան սկյութների դեմ արշավանքում:

ե/ Պելոպոնեսյան պատերազմներն ավարտվեցին Հունաստանի միավորմամբ և համահունական թագավորության ստեղծմամբ:

զ/ 476 թ. Իտալիայում տեղակայված գերմանական վարձու զորքերի հրամանատար Ալարիխը գահընկեց արեց վերջին կայսր Հռոմուլոս Ավգուստուլոսին, որով Արևմտյան հռոմեական կայսրությունը վերացավ:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի  
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,  
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

05.03.2019 թ.